

HAÏ ARI

ՀԱՅ ԼԵՅ


ՈՐԿԱՆ ԳՐԱՆՍԱԽՅՒ ՀԱՅ ԱԿԱՌՈՒՏՆԵՐՈՒ
ORGANE DES SCOUTS ARMÉNIENS EN FRANCE

Բ. ՏԱՐԻ ԹԻՒ
2^e ANNÉE No.

4-5

1930

ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ
JANVIER-FEVRIER



Գինն է 2.50 Ժրանկ

1928 սարին յատկացուցիւմ վեր տրուող զարգացման եւ յառաջդիմութեան: Անոր բոլոր սկսուածները դարձան սկսելու եւ անոնք որ դարձան սկսելու, սարքեր այնով կը կազմուին այդ ժամանակ գործնական կեանքի վրան: Մեր տրուող զարգացում տրուիմք անկեղծ ստանկիմք: Զանկեղծ վարձուցիմք միջազգային րջանակներու մեջ:

Ստեղծուեցաւ զԵՄ ԱԿՈՒՄՍԿԱՆ ԱԲԾՆՈՂՈՐԻՄ մը: 1928ի Զատնուան Անգղիա ճակարդորութիւնը, անկեղծ առիթը եղաւ մեզ, մեր տրուող սկսական իսկական շարժումին ծանօթացնելու համար: Մայիսի հանդէսը եւ ձմեռնային անկախութեան գերեկոյթը, «ծանօթացուցիմք մեր տրուող իրենց ծրարութիւններու»: եւ անկեղծ շատեր սեանքի ինչպէս իրենց տրուող բարեփոխումը եւ որքան օգտուած եւ անոնք: 1926ը բեկորներու հաւաքում մը եղաւ 1927ը ուժերու անկախութեան եւ կերպին բարեփոխումներու շրջան մը, 1928ի ընթացքին ծանօթացուցիմք մեր շարժումը օտարներու եւ հայութեան: Արդարեւ մեր աշխատանքներէն առաջ սկսական զարգացումը մեծ ժողովրդականութիւնը հաշտութեան շրջանակներու մեջ. աշխատանքներ եւ սպասիմք գործիմքեր: Երբ 1928 սարին կը վարկիմք, մեկն ունիմք սկսական հաւաքականութիւն մը, որ գործով սեանք եւ ինչեւ կարելի է ընել հաւերաշխտութեանք եւ ինկնագիտակցութեանք: 1929 սարին պիտի ըլլաւ մեր անկեղծ քոչիմքը դեպի կասարեղութիւն:

Հոս պատմիմք կը զգաւ յիշելու որ այս շրջանուայ յայտարարիմք կասարեղ եւ անբողջական յայտարարիմք կը պատմիմք մասնաւորապէս մեր սկսական արթնացումը հանակարգիմք եւ իրենց հաւաքական աշխատանքիմք: Ծրարները անգործարեղի եւ եւ պետեւ անկարող,

երբ անբողջ զանկումը չ'աշխատիմք միասին զարգացումը մը համար: Մեկն պետեւ զգաւմը եւ մեկն սեանքով որ մեր տրուող իսկական կ'ուզիմք օժանդակել մեզ: Եւ հաւաքով մեկն բոլորիմք եւ մասնաւորապէս երախտարար մեր բոլոր առաջնորդներու:

ՀՐԱՇՔԻ ՏԱՐԻՆ

Եւ այսպէս կը մեկնեմք 1929 սարին: Առաջին գործ' մեր սկսական շարժումը ինկնագիմք անկախ կը յայտարարեւ, եւ անբողջ հայութեան առջեւ կ'ըսեւ «եւ կ'ուզեմք ազատ պարիմք»: Այս գիծով կը յառաջանայիմք մեկն անուշայիմք բոլոր հակառակութիւններու:

Երկրորդ գործ մը միտքեան կոր կոր մասնաճիւղեր հիմնեցիմք, սարածեցիմք զարգացումը, կասարեղիմք ծնողական հաւաքոյթ բեխակցանկեր, արեղի մեծիմք գործակցութիւն մը ունեւարով անկեղծ հեւ:

Սպիտակ կասարեղիմք զարաւի բանակում մը մեր զարաւի սկսականութեան հեւ միասին, եւ այսպէս շարունակական հաւաքոյթներ կազմակերպեցիմք. արիմք. 1929 յունիսիմք ունիմք 1 սկսական խումը եւ 1 զայիմքներու խումը. կոչիմք սարուն վերջը՝ 7 սկսական 4 զայիմքներու, 1 երեցներու խումը եւ 15ի զայի իմքարարներ: Ահա արիմք մը:

Երրորդ գործը, մասնակցեցանք ճէմպօրիմք. (ոչ մեկ բառ կ'արեղնեմք այս մասին):

Չորրորդ գործը. կազմակերպեցիմք մեր միտքիմք. բոլոր մասնաճիւղերը կասարեղ եւ իրարու եղբայրական ջեւ կասարեղ, անկեղծ կողմ բարի կամեցողութիւն: իմքարարները կ'առաջնորդեւ իրենց տրուող մեծ երանքով. կոր մասնաճիւղեր կը կազմուիմք:

Հինգերորդ գործը. մեր ՀԱՅ

ԱՐԻՆ կը հրատարակի: ՀԱՅ ԱՐԻՆ, որ այնքան ջեւ ընդունելութիւն զար մեր բարեկամներուն կողմէ եւ որ մեծ փայլերով կը վարկ դեպի առաջ:

Թուեմք սակարիմք... Եւ այս բոլորը կասարեղաւ առանց աղմուկի. միայն մեր տրուող կողմէ. պետեւ ղեկարարեցիմք շարժումը. որիմք ոչիմք. տրուող իրենք է որ աշխատեցանք:

1929ը հրաշքի սարին եղաւ մեզ համար:

ԱՊԱԳԱՆ

1930ը վստահութեանք է որ կ'ողջունեմք:

Մեկն բոլոր կասարեղ իրարու եղբայրական անկախեղի կասարեղ ղեղեղի ուժ մը կը կերպարեցնեմք հայութեան համար. շարունակեմք մեր ջանքերը, եղբայրներ. կասարեղ արեղ եւ աշխատեմք արեղ ուժեղ կերպով, որպէսզի արեղ մեծեւար մեր գործը՝ արեղի սարածուի սկսականութիւնը հայութեան մեջ, որպէսզի սա անկեղծութեան եւ փառիմք մեջ, որ 20րդ դար կը կոչուի, յայտարարիմք կազմել հայկական իսկաւ սերունդ մը:

Ուրեմք տրուող, սկսիմք կոր սարին վստահ փայլերով:

ԳՈՐԳԷՆ ՄԵՆԱՏՈՒՐԵԱՆ



Հաւ աշխատանքիմք եղբայրութիւն

Նոր Տարի է

Հին տարին մեկնեցաւ:
Ահա տարի մըն ալ անցաւ, սկառւտ եղբայրս, և
այսօր նոր շրջան մը կ'սկսի:

Վայրկեան մը կանգ առ:
Հաշուեյարդար մը ըրէ անցեալ տարուան կեանքիդ:
Յիշէ ինչ որ կատարեցիր լաւ կամ վատ. մտածէ
թէ միշտ իբր սկառւտ գործեցիր:

Այսօր նոր տարի մը կ'սկսիս, նոր գործեր պիտի
կատարես. նոր կեանք մը պիտի վերսկսիս:

Նախորդը մեկնեցաւ. մի մտածեր այլեւս թէ վատ
գործեր ալ կատարեցիր անցեալի մէջ:

Կը բաւէ որ այսօր լաւը կատարես միայն և
այդպէս շարունակես:

Եւ որքա՛ն բարիքներ կրնաս ընել:
Մտածէ անոնց մասին որ կը տառապին, մտածէ
որբերու մասին, մտածէ թշուառներու մասին, մտածէ
հիւանդներու մասին, որոնք անկար կը մնան իրենց
երկաթէ մահճակահաներուն վրայ:

Մտածէ աղքատներու մասին:
Այնքան քիչ են մտածողները:
Մտածէ ամէն անոնց մասին, որոնք կ'աշխատին
քեզ համար, քու օգտիդ համար. մտածէ գործաւոր-
ներու մասին: Յիշէ ծնողքդ և քու անհուն երախտա-
պարտութիւնդ:

Եւ յետոյ մտածէ Աստուծոյ մասին, որ կը ներշնչէ
մեզ և կը մղէ դէպի լաւը:

Այնքան քիչ են մտածողները:
Եւ հիմա մտածէ բարիք և ժպիտ սիրով չորս կողմդ:

Աշխատէ օգտակար ըլլալ, ջանա բարի ըլլալ:

Այնքան քիչ են բարիները:
Նոր տարի է:
Հաւաքէ ուժերդ, կամքդ և
յտաջ նետուէ նոր եռանդով:
Նոր տարի է:

ՀՍԿԻՉԸ



ԿՍՂԱՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ք Ե Ռ Ի Ն

Կը յիշեմ, որ պզտիկ եղած ատենս,
երբ նոր տարին կը մօտենար, կաղանդի
գիշերը հօտաքոյրս իր շուրջը կը հաւա-
քէր մեր ընտանիքի բոլոր երեխաները և
կը պտտէր քեռիի պատմութիւնը:

✂ ✂ ✂

Մարթան մի խեղճ կին էր. նրա
ամուսինը մեռած էր պատերազմին. ամուս-
նուն մահուան լուրը խմանալէն յետոյ
Մարթան կ'սկսի աշխատիլ. զրացիներու
քով ծառայութիւն կ'ընէր, սպիտակեղէն-
ներ կը լուանար, սենեակները կը մաքրէր,
մէկ խօսքով ամէն չարքաշ աշխատանք կը
կատարէր. իր միակ մխիթարանքն եղող
գուակը մեծցնելու, մարդ դարձնելու: Ոչ
մէկ ուրիշ բարեկամ կամ ծանօթ ունէր,
միայն մէկ եղբայր ունէր, որ կը բնակէր
Շալարենց գիւղը:

Չորս երկար տարիներ Մարթան աշ-
խատած էր իրեն զաւակը կրթելու համար.
Լակ անցած օրը զրացիներէն մէկը կանչէր
էր Մարթային սեղանի սփռոցներ լուսալու:
Ըսին որ կաղանդը կը մօտենայ և մաքուր
սփռոցներ են պէտք կաղանդի գիշերը սե-
ղանին վրայ ձգելու համար:

Մարթան սփռոցները լուսայ, բայց
աշխատանքի ժամուն քրտնեցաւ և ուշադ-
րութիւն չդարձնելով պաղ առաւ ու հի-
ւանդացաւ:

Ահա քանի մը օրերէ ի վեր անկա
հիւանդ պտուկած է. յուրտ է զուրթը
և Մարթանց սենեակին մէջ. վա-
ռելիքի դրամ չկայ. բազմաքային բժիշկը
եկած և դեղ է գրած, բայց կարելի չէ
գնել զայն:

Սուրէնը, Մարթայի որդին հինգերորդ
դասարանն էր և լաւագոյն աշակերտներէն:
աչմ' ցուրտ սենեակի մէջ նստած կը
մտածէր ինչ միջոցով դրամ գտնել և
և սենեակը տաքացնել, մայրիկին դեղ և
իրեն կօշիկներ՝ և ամենէն գլխաւորը՝ սօ-
նածաւը գնել. ինչքան կ'ուզէր տօնածաւ
մը ունենալ. չէ՞ որ այսօր կաղանդի գիշեր
է և ամէնքը կ'ուրախանան, նուէրներ կը
ստանան, լակ ի՞նքը... մտածեց, մտածեց
և ոչ մէկ բան կրցաւ գտնել: Սենեակին
մէջ լուռ էր. միայն հիւանդ մօրը հաւա-
ջանքները մերթ ընդ մերթ կը լուռէին.
յանկարճ Սուրիկը տեղէն վեր թռաւ. յիշեց:

«Քեռին... քեռին... մըթմըթալով
բալեց, թուղթ պահարան, թանաք և գրիչ
բերաւ ու նստաւ Քեռիին՝ իր մօրեղբօրը
նամակ գրել:

19.. դեկտեմբեր 24

Սիրեջի Քեռի ջան
Այս նամակս գրած եմ կաղանդի
գիշերը. մայրիկս հիւանդ է ու չորս օրէ
ի վեր պառկած է. մեզ մօտ ցուրտ է.
Կոշիկներս ծակ եմ. փող չկայ որ մայրի-
կին դեղ գնեմ ու ինձ համար աչ սօնա-
ծաւ: Քեռի ջան. նամակս ստանալուդ
պէս եկուր ինձ օգնելու:

Քո Սուրեն

Ապա պահարանի մէջ պիտի գնէր
նամակը երբ դուրսի դուռը վարկին. հա-
րուստի տղախին Սառան ներս մտաւ կա-
պոց մը թեւին տակ:

— Մայրիկդ երբ չէ՞, Սուրիկ:
— Ոչ:

— Է՛հ, հապա ինչպէս ընենք. այս կապոյցը բերի որ Մարթան շուտ մը բուսնայ. երեխաները վրան գինի թափեցին. խակ երեկոյեան Տիւրքեր պիտի գան:

— Կը տեսնես որ մայրիկս հիւանդ է և քիչ առաջ քնացաւ. չեմ ուզեր արթընցնել զինքը:

— Ուրեմն ես կը վերադառնամ ու կ'ըսեմ որ Մարթան հիւանդ է:

— Այո, բայց մի քիչ սպասիր. քեռուս նամակ եմ գրեր. դուն դուրս պիտի երթաս, քեզի տամ տար և արկղին մէջ ձգէ. հա՛:

— Շատ լաւ, Սուրիկ. բարի երեկոյ: Կաղանդի գիշեր. ինչ ուրախութիւն. ամէն երեխայ նուէր կ'սպասէ. նոյնն էր աղանց տան մէջ. Սմբատ աղան քաղաքի հարուստ վաճառականներէն մէկն էր. ունէր երեք զաւակներ, երկու մանչ և մէկ ազճիկ. Ռուբիկը, Բարգէն և Հեղուշ:

Սմբատ աղայի կինը՝ Հուրիսիմէն խոհանոցն էր հիւրերու համար պատրաստութիւններ տեսներու համար: Աղան տակալին ներս չէր մտած և երեխաները կը խաղային սենեակին մէջ. Ռուբիկը իր զինուորական զգեստները հագած էր. մէկ ուսէն թմբուկն էր կախեր, և միւսէն հրացանը և կ'ըսէր. «ես Անդրանիկն եմ»: Իսկ Բարգէնը խաղալիք ձիու վրայ նստած Ռուբիկի դէմ կուռի կ'երթար գոչելով.

— Անդրանիկը ես եմ դուն չես: Շուտով անոնց մէջ կուռ մը ծայր տուաւ. մէկը կ'ըսէր. «ես եմ Անդրանիկը» «Ոչ. Անդրանիկը ձիով մտն կուգայ և որովհետեւ ես ձի ունեմ, ուրեմն Անդրանիկը ես եմ». «ոչ». «այո». «ոչ, ոչ, ոչ և ոչ». «այո, այո և այո»:

Այդ ժամանակ դուռը բացուեցաւ և արկղին Հուրիսիմէն ներս մտնելով սկսաւ բարկանալ երեխաներու վրայ. այս միջոցին զանգակի ձայն լսուեցաւ:

— Գնա դուռը բաց Ռուբիկ. Սառան է անպայման:

Ռուբիկը վազեց դուռը բանալու. քիչ վերջ Սառան ներս եկաւ և կ'ապոյցը սեղանին վրայ դնելով ըսաւ.

Մարթան հիւանդ պառկած է և չի կարող սիրոյցը բուսնալ:

— Է՛հ քանի որ այդպէս է գնա մեր կապոյցս ծաղիկներով սիրոյցը բեր և սեղանի վրայ ձգէ: Սառան դուրս գնաց սիրոյցը բերելու. այդ ժամանակ դուրսի զանգը զարկին. Տիկին Հուրիսիմէն վազեց ամուսնունց դուռը բանալու:

Բարգէնի գետնը ծրար մը գտնելով վերցուց և Ռուբիկին դառնալով ըսաւ:

— Ես ասկէ նաբայեանի գլխարկ կը շինեմ ու կը հագնեմ. հայրիկը միշտ կ'ըսէ որ նաբայեանը մեծ մարդ էր նոյնիսկ քո Անդրանիկից էլ մեծ:

Սակայն Հեղուշը հասաւ և թուզով խփեց անոր ձեռքէն, ըսելով.

— Ձե՛ս տեսներ որ այս նամակը հայրիկին պիտի ըլլայ. և դառնալով նոր ներս մտնող Սմբատ աղային ըսաւ.

— Հայրիկ այս նամակը քեզ կը պատկանի, այնպէս չէ՞:

Առանց հասցիին նայելու Սմբատ աղան պատուեց ծրարը և սկսաւ բարձր ձայնով կարգալ մեղ արդէն ծանօթ նամակը: Յետոյ անիկա դարձաւ Հեղուշին.

— Բայց այս նամակը ինձ չի պատկանիր. ինչպէ՞ս գտաք այս նամակը:

Սառան զբաղած էր սիրոյցը սեղանի վրայ տեղադրելով զբաղած էր, մտաբացաւ և նամակը ծանչցաւ:

— Հա այս նամակը Մարթայի աղան տուաւ որ թղթատարին յանձնեմ, բայց ես մոռացայ և կապոյցին հետ սեղանին վրայ դրի. կ'երեւի վար ընկեր է և Բարգէնը առեր է հետը խաղալու:

— Թեղճ աղայ. ըսաւ Հեղուշը. ես իմ տոնածառս իրեն կուտամ:

— Ես ալ իմ նոր կօշիկները. բացազանչեց Ռուբիկը:

— Իսկ ես իմ բոլոր խաղալիքները. վրայ բերաւ Բարգէնը:

— Բայցի այդ ես անոր շօքօշա ալ կուտամ եթէ հայրիկը թույլ տաայ:

— Դուն թույլ կուտաս այնպէս չէ հայրիկ. որ մենք հիմա անոր բով երթանք:

— Իհարկէ, իհարկէ, ես հակառակ ոչինչ չունեմ, նոյնիսկ եթէ կ'ուզէք. ես ալ ձեզ հետ կ'ուզամ, Սուրիկին քիչ մ'ը գրամ տարու համար:

— Այս... այս... բացազանչեցին բոլորը ուրախութեամբ, և տասը լոպէ չանցած Աղայի տունէն հինգ հոգի դուրս ելան. առջևէն կ'երթար Սառան, տանելով զեղեցիկ զարդարուած տօնածառը. վերջը Հեղուշը ձեռքին բռնած տար հայուստներ և ձմուռան վերարկու. ապա Ռուբիկը իր նոր կօշիկներու կապոյցով, խակ Բարգէնը կ'աշխատէր անոնցմէ ետ չմտալ իր խաղալիքներու, չիր ու չամբիլի և շօքօշայի բեռան տակ ձգմուռելով:

Այսպէս հասան մինչև Մարթանց տունը. Սառան բացաւ դուռը և ամէնքը ներս մտան. Մարթան քնած էր, խակ Սուրիկը գրուելը սեղանին վրայ կախած և նոյնպէս քնած էր:

Սառան տօնածառը սեղանին վրայ տեղադրեց. երեխաները նոյնպէս իրենց

բեռները շարեցին ամէն կողմ, խակ Սմբատ աղան զբաղանէն 500 Փրանք հանեց, ծրարին մէջ դրաւ և վրան գրեց.

Այս քոչոչը իմ սիրելի Սուրիկին, իր Բեռին

Մտարը դրաւ նոր կօշիկներէն մէկուն մէջ, և ամէնքը դուրս ելան առանց ալ մտիկ հանելու:


Յայտնի չէ թէ որքան ժամանակ անցաւ. վեջապէս Սուրիկը արթնցաւ. Լ. աջ ու ձախ նայեց սպառն, ու իր աչքին չհաստատարով. «մայրի՛կ, մայրի՛կ» գոչեց. Մարթան արթնցաւ:

— Այս ի՞նչ է Սուրիկ:
— Ձեմ՛ գիտեր, մայրիկ. երա՞զ է թէ ճիշդ: Տես տօնածառս, ի՞նչ լաւ վերարկու, հապա այս կօշիկները. նայե՛ տարիս կուզա՞ն թէ ոչ:

Սակայն կօշիկները առնելով նկատեց նամակ մը, զայն տուաւ ու բացազանչեց.

— Այս ինչ է՛ թուզթի կտոր. ոչ. նամակ մըն է: Սուրիկը կարգաց Սմբատ աղայի երկտողը և հինգ հարիւր Փրանքը ձեռքին, գոչեց:

— Ա՛, հիմա կը հասկընամ, մայրիկ, այս բոլորը Բեռին է ուղարկած, Բեռին: Հետև. Վիգէն ՉՈՒԱՐԵԱՆ





ՍԿԱՄԱՐԸ

ԽՈՒՄԲԵՐՈՒՆ
ԹԵՔՆԻՔ
ԲԱԺԻՆԸ



ԲՆԱԿԸ

ԳԱՅԼԻԿՆԵՐԸ

Անցեալ ամիս խօսեցանք սկսուած կան խումբին և անոր ընդհանուր գործունէութեանը մասին. այսօր կ'ուզենք խօսիլ գայլիկներու մասին: Գայլիկներու խումբը կը կազմուի 8—12 տարեկան մանուկներէ, որոնք բաժանուած են վեցնեակներու: Ամէն վեցնեակ կը ղեկավարուի վեցնեակապետի մը կողմէ: Գայլիկներու խումբը, ընդհանրապէս 3 կամ 4 վեցնեակներէ կը բաղկանայ:

Գայլիկներու կազմակերպութիւնը բարձրովին կը տարբերի սկսուածներէն: Գայլիկները «փոքրիկ սկսուածներ» չեն, այլ «ապագայ սկսուածներ»: Անոնք իրենց տարիքին համեմատ խառնուածք ունին և գայլիկներու զբօսանքներէն և սրբազրեղ գայլիկին յուսի բնութագրերը որոնք սովորական են իւրաքանչիւր 8—12 տարու տղոց քով, և այլախօս օգնել ընտանիքին:

Այս նպատակին իրագործման համար մէկ միջոց միայն կը արամադրէ մեզ Պէյտըն Բաուլ, այն է՝ խաղը: Արդարեւ Գայլիկները իրենց ամառուային արշաւները խաղերով կ'անցնեն: Խմբապետուհին ուշագիւր կերպով կը հսկէ անոնց վարմունքին. մասնաւոր խաղով մըն է որ կը սրբազրելին շատ մը յոռի կողմեր:

Հաւարումները շատ կարեւոր են գայլիկներու համար, նուազ չօգնեցուցիչ ըլլալով մէկտեղ: Հաւարումներու ընթացքին գայլիկները կ'ըզտուին մասնաւորապէս ձեռագործով, (կուլի և խաւաքարով աշխատանքներ) և կամ՝ գծազրութիեամբ:

Գայլիկին ամենամեծ վարձատրութիւնը արկածալից պատմութիւններն են որոնք կը պատմուին խմբապետուհիին կողմէ երբ ան ուշադիր, խելօք և ճշմարտախօս եղած է:

Գայլիկներու կազմակերպութեան կըրթական զրութիւնը կարելի է հետեւեալ ձևովներկայացնել:

- 1.— Խաղեր:
- 2.— Չեռագործ:
- 3.— Հաւաքածոներու աշխատանքներ:

Աւելցնենք այս երեքի վրայ պատմութիւն մ'ը և հացերէնի գասեր և կ'ունենանք գայլիկներու խմբի մը ամբողջ յաջողութիւնը:

Անգամ մըն ալ շեշտենք որ շատ վնասակար է գայլիկներու արշաւ կատարելը սկսուածական խմբի մը հետ միասին: Սկսուածները և գայլիկները ոչ մէկ կապ կրնան ունենալ միասին, մասնաւորապէս

շաւներու և հաւարումներու ընթացքին: Վերջերս զանազան երկիրներու մէջ փորձեր կը կատարեն գայլիկները և ճիւճեանակներ (8--11 տարեկան աղջիկներ) միասին հաւաքել: Այս մասին տակաւին չենք կրնար կարծիք մը կազմել, որովհետեւ շատ նոր է այս զրութիւնը և կը

սպասենք գործնական արդիւնքին: Գայլիկը պէտք է շատ քնքոյշ և միւսնայն ժամանակ խիստ կարգապահ դառնայ որպէսզի երբ 12 տարեկան ըլլայ իբր օգտակար ոչ մը մտնէ սկսուածական շարքերուն մէջ:

ԽՈՒՄԲՈՒՆ



ՄԵՐ ՃԱՄԲԱՅԻՆ

Մեր սկսուածական ճամբան ամենագիտարին ճամբաներէն մէկն է, և մեծ ջանք ու կորով պէտք է հասնելու համար նպատակին:

Սկսուած ամէն վայրկեան կը հանդիպի խոշոր գիտարութեանց. վայրկեաններ կուզան ուր ամէն մէկը կը բաջարէ ինքզինքը, բաց և այնպէս ինքը կը բալէ, առանց մտնուալու և առանց վհալտելու, ժպիտը դէմքին կ'երգէ ու կ'աշխատի:

Տկարին պաշտպանն է ինքը և մանկիկին սիրած ընկերը. կրնայ վիճարանութեան մասնէլ սկսուածական հակառակորդի մը հետ և կրնայ խաղալ պէպէքէ մը հետ. երբեք չի մտնար իր վերին պարտակա. նութիւնները իր նպատակին հասնելու համար:

Շատեր չեն հասկընար զինքը. երբեմն կը ծաղրեն զինքը. ան ուսերը կը թոթուէ միայն և կը յառաջանայ:

Ան հայրենիքի պաշտպան հրեշտակն է. կը սիրէ զայն ու չի մոռնար թէ հոն կան իրեն սիրելի եղբայրներ ու քոյրեր, որոնց կարօտովը կ'այցի:

Թող գիտնան մեր սիրելի եղբայրներ և հաւատան որ հայ արին երբ ալ ըլլայ պիտի կարենայ իր նպատակակէտին հասնիլ, որովհետեւ ան անձնուէր ու կորովի հայ մըն է և միշտ վառ կը պահէ իր ազգին անունը:

Սկսուածութիւնը միայն կրնայ փրկել մեր պատանի սերունդը այլասերման վտանգէն, որ հրեշտի մը պէս կեցած է մեր գլխուն և կ'սպասէ:

Թող սկսուածութիւնը մեր խոնարհ ըլլայ: Ն. ԽՐԻՍՏՈՍԻԱՆ

Վերադարձը

Մեր Միութեան լուսագոյն բարեկամներէն և «Հայ Ա.ր.ի» Նիւ-Եորքի գործակալ Պ. Արիստողոմեանէ ստացանք հետեւեալ սիրուն նկարը, որ առած էր մեր սկառտներու Ճէմպօրիէն վերադարձին օրը, կառ տիւ Նօո:

Մեծ հաճոյքով կը հրատարակենք այս գեղեցիկ փաստը որուն վրայ մեր տղաքը, ժպտուն և առողջ, Փարիզ կը հասնին փառաւոր Ճէմպօրիին մէջ հայ ազգը պատուաւոր կերպով ներկայացնելէ յետոյ:

Այս Ճէմպօրիին մեր միութեան գործունէութեան ամենափառաւոր փաստն է: Առաջին անգամն ըլլալով հայ տղգային կեանքին մէջ հայ



սկառտները մասնակցեցան միջազգային հաւաքոյթի մը մէջ, իբր հայ ներկայացուցիչներ: 44 ազգերու կողքին հայ արիները պարգեցին կարմիր կապոյտ-նարինջը. Այս բոլորը հակառակ նենգամիտ արգելքներու, որոնք ստեղծեցին հայ հայրենակիցներ, բարոյական և նիւթական դժուարութեանց առաջ դնելով հայ արիները:

Հակառակ այս բոլորին մեր տղաքը իրենց անձնական զոհարելութիւններով և առանց ու իրէ օգնութեան, մասնակցեցան Ճէմպօրիին, ամենակատարեալ ձեւով կատարեցին իրենց պարտականութիւնները, և վերադարձան Փարիզ մեծ գոհունակութեամբ:

Ահա թէ ինչու կը ժպտին բոլորն ալ...:

ՀԱՅ ԱՐԻ

Սկառտի մը յաջողութիւնը

Մեր Վալանսի խումբի հիմնադիր սկառտներէն Յակոբ Թովմասեան (Երզնկացի), որ անցեալ տարի էֆօ բօյիքեմիսէն իր վկայականը աննելով ընդունուած էր 53րդ Ռեմիսան ս'ալիսիօն՝ օդանաւային մեքենազիտութեան հետեւելու համար, ուրախութեամբ կ'իմանանք որ վերջերս ստացած է Մեխանիսէն ս'ալիսիօնի Ա.հոօ Բիլապ սիւ Ռօն Է սը Սիւս-էսքի վկայականը և բարձրացած է տանապետի աստիճանին. իր զինւորական ծառայութեան մէջ մեքենավարը եղած է 100 ձիու ուժով օդանաւի մը և կատարած է բազմաթիւ ճամբորդութիւններ:

Կը յուսանք որ Թովմասեան պիտի կարենայ ժօտիկ ապագային բարերար մը զտնել, և անոր շնորհիւ օդանաւ մը ունենալ:

Մեր շնորհաւորութիւնները:

ՍԿԱՌՏԱԿԱՆ ՇՔԵՂ ԶԵՐԵԿՈՅՔ

Դ. Տարի Գ. Հ. Ս. Փարիզի շրջան

Նախագահութեամբ
Պ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆԻ

Տեղի կ'ունենայ կիրակի, յունվար 26ին կէսօրէ յետոյ ժամը 6րդ 14,50ին, Union de Parisի սրահներուն մէջ, 14, Rue de Trévise (métro Cadet)

Սկառտական անկախընթաց յայտագիր
Նուագախումբ, ցուցադրութիւն. ճոխ պիւլի
ներկայացուցներ սկառտներու կողմէ, զեղարուեստական յայտագիր և պարեր

Մոտք 5 Եւ 10 ժրանք

ՄԱՐՄԻՆԱԿՐԹԱՆՔ

ԱՄԷՆ ԲԱՆԷ ԱՌԱՋ

ՄԱՐՄԻՆԸ

Մկանին պաշտամունքը չէ որ կը քարոզեմ, և ոչ ալ փառքը բիրտ ուժին:

Կ'ուզեմ միայն որ մեր նոր սերունդը, մեր տղաքը չմոռնան մէկ բան, թէ մարմինն առողջութիւնը էական պայմանն է կեանքի մէջ յաջողելու համար:

Տղա՛ք, վաղը երբ կ'ստուգուի գործի աստարեղ, երբ երեսն ան աշխարհի վրայ կատարել ձեզի բաժին ինկած պարտականութիւնը, տկար և հիւանդ մարմինով մը չէ որ պիտի կրնաք ի գլուխ հանել ձեր ստանձնած գործը:

Լոկ խելքն ու միտքը, խնայական կարողութիւնները բաւ չեն յաջողելու համար: Ատանք խիստապէս թանկագին գանձեր են: Բայց, ըսէք ինչպէս, ո՞ր խելքն է այն, որ իր գանձերը կը ստանի և կը պահէ խորտակուած անակի մը մէջ, զոր ամենապղտիկ փոթորիկն իսկ կրնայ անվերականգնելիօրէն խորտակել, քարուքանդ ընել, փծացնելով վերջնականապէս իր մէջ գանուած գանձերը:

Մեր մարմինը շէնք մըն է. անոր մէջ է որ կը պահենք այս աշխարհի մէջ մեր ճշմարտ հարստութիւնը կարմուխ իմացական ու բարոյական մեր բոլոր կարողութիւնները: Եթէ այդ շէնքը հաստատ է, վարաս էնք որ ապահով տեղ են պահուած մեր գանձերը— մեր զբաղմունքը. մահը չպիտի կրնայ զիւրին կերպով ներս թափանցել այդ հաստատուն շէնքին պարիսպներէն, խլելու համար գանձեր մեր ձեռքէն:

Եւ զիտեցէք— սրբան աւելի հաստատ ըլլայ այդ շէնքը, այնքան աւելի իր մէջ գտնուող գանձերը յարգ կ'ստանան, որովհետեւ մեր խնայական և բարոյական կարողութիւններն իսկ, կեանքի ընթացքին,

յաճախ պէտք ունին բիրտ ուժին կամ չարքաշ մարմնի մը, արժեցնելու համար իրենք զիրենք:

* * *

Տկար մարմինը դուռ կը բանայ բոլոր զժբախտութեանց:

Վաղուան անստոյգ վիճակը չհեռանար երբեք իր աչքերու առջևէն: Անոր նախանձ մը կը կրծէ շարունակ իր ներսի-զին, չար նախանձ մը կէպիլ բոլոր անոնք որոնք իրենց կայտառ ու աշխոյժ մարմինը կը պտտցնեն իր շուրջը, կարծես ակամայ հեգնելով իր տկարութիւնը:

Ձուր անողը չէ որ ժան ժաք Ռուսօ գրած է. «Մարմինը սրբան տկար ըլլայ, այնքան կը հրամայէ, որքան զօրաւոր ըլլայ այնքան կը հնազանդի»: Տկար մարմինը միշտ աւելի հակամէտ է չարի:

Չօրաւորը զիտակից իր ուժին, ինքնավստահ ու հպարտ, կը քայլէ միշտ դէպի յաւաք, առանց ետև կամ աջ ու ձախ զիտելու: Հիացողներ միայն կը գանէ իր ծամբուն վրայ, և եթէ նոյնիսկ ըլլան անոնց մէջ թշնամիներ ալ, անոնց ալ վախ կը պարտապրէ:

Իսկ տկարը՝ արհամարհուած բարբէն, արհամարհուող մանուկանց ինքնիրմէն, աչքերը միշտ գետին յառած, գտտապարտուած է յաւէտ մնալ ամենէն ետևի շարքերուն մէջ:

* * *

Պէտք եղած չափով չէ տարածուած զժբախտաբար դուռ մեր մէջ մարմնակրթանքի սէրը:

Առանց չափազանցելու կրնամ նոյ-

նիսկ ըսել որ մեզմէ շատերուն դուռ կը մնայ բարբոսի սննդանոթ մարմնակրթանք բաւին խիստան նշանակութիւնը:

Գնդախաղի բանի մը փորձեր ու մրցումներ, ահա ամբողջ մարմնակրթական պաշարը մեր երիտասարդներէն ու պատանիներէն անոնց,— ցանցաւ թիւ մը ստանք.— սրոնք առաւել կամ՝ նուազ, նախանձախնդիր են իրենց մարմնին կատարեալ զարգացման եւ սակայն փութալով, ինչքան ալ հրապուրիչ և գեղեցիկ մարդական խաղ մը եղած ըլլայ, չէ կարող միայնակ ինքնիրեն կերտել ներդաշնակ և զօրաւոր մարմիններ:

Փութալովէն առաջ կան դուռ կատարելիք ուրիշ բաղմամբ փորձեր, մանաւանդ մեր պատանիներուն համար, որոնք

իրենց մատղաշ և յաճախ տկար մարմինը — բոլորովին անպատրաստ— կը նետուին փութալով դժուարին մրցումներու մէջ, որ կը գանեն սակայն, փոխանակ իրենց երազած յաջողութիւններուն, իրարու յաջորդող յուսախաբութիւններու շարքեր, վրասելով նոյնիսկ իրենց առողջութեան:


«Հայ Արի» նախանձախնդիր հայ պատանեկութեան ֆիզիքական առողջ զարգացման, պիտի փորձէ հետզհետէ գծել այս էջերուն մէջ յստակ ուղեցոյց մը մեր տղոց համար, որոնք կ'ուզեն տէր ըլլալ զօրաւոր ու կայտառ մարմնի մը, լաւագոյն կերպով օգտագործելու համար իրենց ունեցած խնայական և բարոյական կարողութիւնները:

Վ. Մ.




Վաղանի սկստաներուն այն մտար ու Բեդի. Պետին հետ Բիլիա մկնկեցաւ նոր մասնաձիւղ կազմելու:

Ժ Պ Տ Ի Ն Ք



Է. Օձաբաշխ




Այցեդրան. — Համարդ շատ կը սիրես թէ մայրդ եթէ լաւ պատասխանես այս շօքօլան քուկդ է:

Տան տղան. — Ճիշդն ըսե՞մ. ամենէն աւելի ձեր ձեռքի շօքօլան կը սիրեմ.

Ուսուցիչը. — Հաճեցէք գտնէ մօրուքս յարգել:

Աշակերտը. — Բացատրեցէք, խընդրեմ, թէ ինչ ձևով կրնամ յարգել ձեր մօրուքը:



Է. Օձաբաշխ

Յանախոտըր. — Զարմանք. ինչո՞ւ այսքան ետ է ձեր ժամացոյցը:

Պաշտօնեան. — Ժամանակը խնայողաբար գործածելու համար:



Մ Ի Ո Ւ Բ Ե Ն Ե Ն * Վ Ե Ն Ա Ն Ք Ը

Ն ՈՐ ՄԱՍՆԱՃԻՒՂ ՄԸ

ԸՆԴՀ. ՊԵՏԸ ԱՆԳՎԻՅԻՈՅ ՄՕՏ

Դեկտեմբեր 11ին Օսմա քաղաքն աչցելեցին Ֆ. Հ. Սկառանբու Գործադիր Խորհուրդի անդամ Պ. Պաշեան և Վարանտի գալիկներու պետ օր. Տուրպազ:

Տեղւոյն վտայ կազմուած սկառաուկան խմբակը վերջնականապէս վաւերացւեցաւ: Տասնեակ մը նոր անդամներ արձանագրուեցան և այսպիսով կազմուեցաւ Ֆ. Հ. Ս. Միութեան Օսմայի մասնաճիւղը:

Յաջողութիւն կը մաղթենք մեր սկառաու եղբայրներուն:


ՓԱՐԻՉԻ ԳՍՅՆԻԿՆԵՐՈՒ

ԿԱՂԱՆԳԻ ԾԱՌԸ

Յաւով. 5ին Փարիզի գալիկները կազանդի ծառ մը պիտի սարքեն Փարիզահայ փոքրիկներու համար, ներկայութեամբ Ընդհանուր Պետին: Հաւաքոյթը շատ հաճելի անցնիլ կը խոստանայ:

Եթէ իւրաքանչիւր սկառաու

բաժանորդ մը գտնէ, «ՀԱՅ ԱՐԻ»ն կը հրատարակուի 24 էջերով:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՖՐԱՆՍ. ՀԱՅ ՍՎԱՈՒՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԱԳԻՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Ֆրանսայի հայ սկսուսներու Միութեան վաւերացուած խմբագրատեղան կազմերը Գործադիր Խորհուրդին կողմէ:

ԲԱՐԻՉ Ա. խումբ Հրանդ Գերձակեան խմբագրատ. 7. Rue Tournon Paris.

Բ. խումբ Արմիկ Զամարեան խմբագրատ. 21 Rue Haussaire Enghien-les-Bains.

Գայլիկներ Օր. Վ. Բէկլատեան խմբագրատուհի 7 rue Desnouettes Paris 15e.

Օր. Հ. Բրիկեան Վիս-խմբագրատուհի 10 Ave. de Ceinture Enghien-les-Bains

Երէցներ Յակոբ Պետիկեան Երէց-առաջնորդ 4 Ave. St. Roman Villejuif (Seine)

ՎԱԼԱՆՍ Սկսուսներ Պարոյր Պայեան խմբագրատ. 6 Rue Dauphine Valence (Drôme)

Գայլիկներ Օր. Մ. Տուրպոզ խմբագրատուհի 4 Rue Bouffier Valence (Drôme)

ՄԱՐՍԷՅԼ Սկսուսներ Բ. Գալէրեան պատասխանատու-վարիչ 49 Rue Nationale Marseille

ԲՐԻՎՈ. Սկսուսներ Զաւէն Բապուճեան պատ. վարիչ Chalamond Privas (Ardèche).

Գայլիկներ Օր. Զ. Բապուճեան խմբագրատուհի Chalamond Privas (Ardèche)

ՌՕՄԱՆ. Գայլիկներ Տիկին Պիլալեան խմբագրատուհի 15 Rue de la Batie Romans (Ardèche)

Այս խմբագրատները նշանակուած են Գործադիր Խորհուրդին կողմէ. և Տեղերուն վրայ անոնց պէտք է զիմի պրճանագրուելու. եւ ամէն կարգի տեղեկութիւններ ստանալու համար,

«ՀԱՅ ԱՐԻ»Ի ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Լիոնէն ատամնաբոյժ պ. Ենովք Խաչատրեան տարեկան 4 «Հայ Արի» կը նուիրէ յատկացուելու համար գաղութահայ հաստատութեանց:

Լիոնէն Խաչատրեան եղբարք տարեկան 5 օրինակ «Հայ Արի» կը նուիրեն հայ հաստատութեանց:

«ՀԱՅ ԱՐԻ» քարեկամները

«Հայ Արիի քարեկամներ» պիտի հոչակուին այն հայրենակիցները, որոնք կը արածեն ՀԱՅ ԱՐԻ-Ն, նոր բաժանորդներ գտնելով:

ԸՆԹԵՐՑՈՂ

Պիտի չուզէի՞ր ՀԱՅ ԱՐԻԻ ԲԱՐԵԿԱՄ ճոչակուիլ:



Le Gérant S. NERSES -- Imprimerie G. NERCES 65, Rue Pascal PARIS (13^e)